ՀՏԴ 330.834.003.2

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՔԵՅՆՍՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

Տնտեսական աճի քեյնսյան մոդելների վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացումը ենթադրում է տնտեսության հիմնական ճյուղերում խոր կառուցվածքային փոփոխություններ: Առանց առաջադիմող տեխնոլոգիաների կիրառման՝ պարզապես բացառվում է որակյալ տնտեսական աճի հնարավորությունը: Սա նշանակում է, որ ներկա պայմաններում տնտեսական աճը ոչ մի կերպ չի կարող շրջանցել տեխնոլոգիական մոդեռնացումը. հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացումները տնտեսական աճի ապահովման թե՛ քանակական, թե՛ որակական բարելավման հիմնական աղբյուր են:

Առանցքային բառեր. տնտեսական աճ, տնտեսական զարգացում, ինստիտուցիոնալ փոփոխություններ, զարգացող երկրներ, տեխնոլոգիական մոդեռնացում, աղքատության արատավոր շրջանակ, արտադրական ինվեստիցիաներ, բնակչության շնչին ընկնող ազգային եկամուտի միջին մակարդակ, «մեծ հրման» տեսություն:

Քեյնսյան տեսության համաձայն՝ երկրների տնտեսական թերզարգացման հիմնախնդիրները կապված են եկամուտի ցածր մակարդակի հետ, ինչն էլ բացատրվում է սպառման և խնայողությունների ցածր մակարդակով: Սպառման ցածր մակարդակը, ենթադրելով էֆեկտիվ պահանջարկի անբավարարություն, հանգեցնում է ներքին շուկայի նեղացմանը և ինվեստիցիաների աճի ցածր տեմպերի: Զարգացող երկրների մոդեռնացման ժամանակակից կոնցեպցիաների ձևավորման հարցում մեծ ազդեցություն է ունեցել «աճի ինքնապահպանմանն» անցնելու տեսությունը:

Տնտեսական աճը բարդ ու բազմագործոնային տնտեսական երևույթ է, որի վերաբերյալ ձևավորվել են տարբեր տեսություններ, մշակվել տնտեսական դինամիկայի տարբեր մոդելներ, որոնք թույլատրում են բազմակողմանիորեն ուսումնասիրել տնտեսական աճի հիմնախնդիրները: Տնտեսական շատ խնդիրներ պայմանավորված են աճով, կառուցվածքային, ինստիտուցիոնալ փոփոխություններով, որոնք իրենց ամբողջության մեջ ազդում են կյանքի որակի վրա: Տնտեսական աճի ժամանակակից մոտեցումներում կարևորվում է ամերիկացի տնտեսագետ Ու.Ռոսթոուի «ինքնապահպանվող» աճին անցման տեսությունը, որն, ըստ էության, ներկայացնում է տնտեսության զարգացման պատմական էվոլյուցիան: Այստեղ նա կարևորում է տեխնիկայի զարգացման և գործարար ակտիվության մակարդակները, սպառման աստիճանը և կուտակման նորմը: Ապացուցելով, որ տնտեսական զարգացումը չի սահմանափակվում միայն արտադրողների և սպառողների, ներդրումներ և խնայողություններ կատարողների փոխհարաբերություններով, նա ներկայացնում է տնտեսական աճի փուլերի մի

տեսություն[1], որում լուսաբանում է, թե ինչպես է տեղի ունենում անցումը ավանդական հասարակությունից ինֆորմացիոն հասարակությանը, ընդ որում՝ որպես փուլերի առանձնացման չափանիշ Ռոսթոուն ընդունում է այնպիսի տեխնիկատնտեսական բնութագրեր, ինչպիսիք են տեխնիկայի զարգացման մակարդակը, տնտեսության ճյուղային կառուցվածքը, ազգային եկամուտում արտադրական կուտակման բաժինը, ապրանքների ու ծառայությունների սպառման կառուցվածքը և այլն:

Այսպես, տնտեսական աճի **առաջին փուլին** կամ ավանդական հասարակությանը բնորոշ էին «մինչնյուտոնյան գիտությունն ու տեխնիկան», տնտեսության մեջ գյուղատնտեսության ու պարենամթերքի արտադրության գերակշիռ դերը, կուտակման շատ ցածր նորմ, ազգային եկամուտի անարտադրողական օգտագործումը (աշխատունակ բնակչության 75 %-ից ավելին զբաղված էր պարենամթերքի արտադրության մեջ)[2]: Ինչ խոսք, նման հասարակությունն ունի հիերարխիկական կառուցվածք, որտեղ քաղաքական իշխանությունը պատկանում է հողասեփականատերերին կամ կենտրոնական կառավարությանը:

Երկրորդ փուլը ենթադրում է անցում վերելքին կամ թռիչքին, որն առանձնանում է գյուղատնտեսության, տրանսպորտի և արտաքին առևտրի ոլորտներում կատարվող էական փոփոխություններով: Հատկանշական է, որ այստեղ տեղի է ունենում տնտեսական աճի տեմպերի որոշակի բարձրացում՝ պայմանավորված կուտակման 5% նորմով:

Երրորդը վերելքի կամ թռիչքի փուլն է, որի տևողությունը 20-30 տարի է: Այս փուլում աճում են կապիտալ ներդրումների տեմպերը, մեծանում է բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալը, մեծ թափ է ստանում նոր տեխնիկայի ներդրումը արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, ընդ որում՝ սկզբնական շրջանում զարգացումն ընդգրկում է ճյուղերի ոչ մեծ խումբ, այսպես կոչված «առաջատար օղակը», և միայն հետագայում՝ ամբողջ տնտեսությունը: Խոսքը վերաբերում է ավտոմատ կամ ինքնապահպանվող աճին, որի ձեռքբերումը ենթադրում է ազգային եկամուտի մեջ արտադրական ինվեստիցիաների տեսակարար կշռի մեծացում՝ առնվազն 5- 10%-ով, ինչը կխթանի արդյունաբերության մեկ կամ մի քանի սեկտորների արագ զարգացումը: Իսկ քաղաքական դաշտում, կարելի է ասել, որ վերջնականապես գերակա է դառնում տնտեսության մոդեռնացման կողմնակիցների քաղաքական հաղթանակը, կամ տեղի է ունենում ավանդական հասարակության պաշտպանների նահանջ: Ռոսթոուն կարևորում է նոր ինստիտուցիոնալ օջախների ծագումը՝ կապված ներքին աղբյուրներից կապիտալի կենտրոնացման, շահույթի վերաինվեստավորման հետ և այլն, ինչն էլ կարող է հանգեցնել ամբողջ տնտեսական օրգանիզմի նախասկզբնական իմպուլսի տարածմանը, մասնավորապես՝ արդյունաբերական հեղաշրջման

նվաճումների ներդրում արտադրության մեջ, արտադրության ավանդական եղանակների հաղթահարում և այլն:

Չորրորդ՝ «հասունությանն անցման» փուլը Ռոսթոուն ներկայացնում է որպես տեխնիկական առաջընթացի երկարատև էտապ, երբ կուտակման նորմը հասնում է 20%-ի, բարձրանում են տնտեսական աճի տեմպերը, որոնք գերազանցում են բնակչության թվաքանակի աճի տեմպերին, զարգանում է ուրբանիզացիայի գործընթացը, բարձրանում է բարձրորակ աշխատանքի տեսակարար կշիռը, արդյունաբերությունը ղեկավարվում է բանիմաց մասնագետների՝ կառավարիչների կողմից, և հասարակությունն անցնում է արդյունաբերական զարգացման փուլին:

Հինգերորդ փուլն արդեն ներկայացնում է զանգվածային բարձր սպառման դարաշրջանը, որտեղ տեղի է ունենում անցում առաջարկից պահանջարկին, արտադրությունից՝ սպառմանը, կուտակման նորմը դառնում է աննշան, երկրի արտադրական պոտենցիալը գործում է հանուն ազգի սպառման: Ռոսթոուի կարծիքով՝ երկրները այս ուղին անցնում են տարբեր տեմպերով և գտնվում են զարգացման տարբեր փուլերում, ընդ որում՝ տնտեսական կյանքի զարգացումը տեղի է ունենում ոչ թե հեղափոխական, այլ էվոլյուցիոն ուղիով:

Հետագայում Ռոսթոուն ավելացնում է **վեցերորդ՝** կյանքի որակի փնտրումի փուլը, երբ առաջին պլան է մղվում մարդու հոգևոր զարգացումը [3]: Թերևս այս ձևով էր նա փորձում ուրվագծել ժամանակակից հասարակությունների հետագա զարգացումը: Զարգացումը նման մեկնաբանմամբ ներկայանում է որպես աճի բարձր տեմպերի հոմանիշ, իսկ խոր սոցիալական, ինստիտուցիոնալ փոփոխությունները, կարծես թե, հայտնվում են ստվերում, այսինքն առաջին պլան է մղվում ինվեստիցիաների և համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի հարաբերակցությունը:

Ինչ խոսք, աճի փուլերի տեսությունը առաջընթաց քայլ էր XX դարի առաջին կեսերի տեսությունների համեմատությամբ, սակայն հայեցակարգը, հավակնելով բացատրել մարդկության զարգացման պատմական գործընթացը, ունի մի շարք բացթողումներ: Մասնավորապես, այն համակարգված չի ներկայացնում տնտեսական հարաբերությունները, այլ վերլուծության է ենթարկում դրանց առանձին տարրերը, և այս առումով անտեսվում են սոցիալ-իրավական կողմերը: Բացի այդ, բացարձակացվում է զարգացման մոդեռնացման ժամանակաշրջանը, արդյունաբերական հեղաշրջման նախապատրաստման և ներդրման փուլը: Այս իմաստով հասարակության զարգացման մյուս որակական փուլերը, ինչպես, օրինակ, ինդուստրիալ հասարակության փոխարինումը հետինդուստրիալով (գիտատեխնիկական հեղափոխության), բոլորովին չեն քննարկվում: Ինչ վերաբերում է արդյունաբերական հեղափոխությանը, ապա այն մեկնաբանվում է միակողմանիորեն: Գլխավորապես կարևորվում են սոցիալ-հոգեբանական բնութա-

գրերը՝ մի կողմ թողնելով ագրարային հասարակությունից արդյունաբերականին անցման սոցիալ-տնտեսական հետևանքների ամբողջ փունջը: Ի վերջո, փուլերի առանձնացման քանակական բնութագրերն ունեն բավականին աբստրակտ բնույթ: Բանն այն է, որ այս մոտեցման մեջ հատկապես շեշտադրվում է արտադրական ինվեստիցիաների բաժնի կրկնապատկման մասին միտքը, ինչը բացահայտորեն հակասում է զարգացած կապիտալիստական երկրների պատմական փորձին: Այս առումով տեղին է մեջբերել Ս.Կուզնեցի միտքն այն մասին, որ թռիչքից առաջ շատ երկրների ազգային եկամուտում ներքին կուտակման բաժինը եղել է 5%-ից բարձր (ԱՄՆ-ում XIX դարի առաջին կեսերին այն կազմել է 15-20%, Կանադայում՝ 1870-ին՝15%, 1890-ին՝ 15,5%, 1900-ին՝ 13,5%), մինչդեռ թռիչքի ընթացքում այդպես էլ կրկնապատկում տեղի չի ունեցել: Ռոսթոուի սխեման «կարող էր համապատասխանել կոմունիստական թռիչքին», քանի որ «սոցիալիստական ինդուստրացման» գործընթացում «իրականում տեղի է ունեցել (չնայած ավելի բարձր մակարդակում) արտադրական կուտակման նորմի կրկնապատկում» [4]:

Չնայած որոշակի թերություններին, «ինքնաապահովման աճին» անցնելու հայեցակարգը հետագայում կիրառվեց մոդեռնացման նոր տեսությունների ստեղծման գործընթացում, ինչպես, օրինակ՝ **«մեծ հրման»** (big push) հայեցակարգը: Վերջինս «աղքատության արատավոր շրջանակի» և «ինքնապահպանվող աճի» տեսությունների յուրօրինակ սինթեզ է: «Աղքատության արատավոր շրջանակ» հասկացությունն առաջին անգամ գործածության մեջ են դրել Գ.Զինգերը և Ռ.Պրեբիշը 1949-1950 թթ: Այս հայեցակարգն առաջացել է՝ կապված թույլ զարգացած երկրների վերլուծության համար տնտեսական հավասարակշռության տեսության կիրառման հետ, ընդ որում՝ թույլ զարգացում ունենալը նրանք բացատրում էին փոխկապված տնտեսական ու ժողովրդագրական գործոնների համատեքստում: Հետպատերազմյան տարիներին շրջանառության մեջ մտան այս հայեցակարգի բազմատեսակ տարբերակներ, որոնց հիմքում ընկած է բնակչության աճի և տնտեսական պայմանների փոփոխությունների միջև հարաբերակցության տատանումը: Վերջինս կապված է բնակչության շնչին ընկնող ազգային եկամուտի միջին մակարդակի բարելավմամբ կամ վատթարացմամբ: Կյանքի որակի բարձրացումը հաճախ «կերակրվում» է բնակչության հետագա աճով: Ավանդական հասարակությունը բնութագրվում է նույն մակարդակի տատանումներով, այսինքն բնակչության մեկ շնչի հաշվով միջին եկամուտը երբեմն փոքր-ինչ աճում է, հետո ընկնում՝ կապված կենսամիջոցներ-բնակչություն հարաբերակցության վատթարացման հետ: Երկրորդ փուլում, երբ տեղի է ունենում անցում վերելքին կամ թռիչքին, իրավիճակը որոշակիորեն բարելավվում է, մասնավորապես՝ մեկ շնչի հաշվով աճում է միջին եկամուտը, ինչը, այնուամենայնիվ, դեռևս չի փաստում անշրջելի փոփոխությունների մասին: Այս

առումով՝ միայն թռիչքի փուլում է տեղի ունենում մեկ շնչի հաշվով միջին եկամուտի՝ որակապես նոր կենսամակարդակի փոխակերպում, և որ ամենակարևորն է, նախադրյալներ են ստեղծվում անշրջելի, թեկուզ ցիկլային, վերելքի կամ աճի համար:

Հարկ է նկատել, որ հետագայում տնտեսագետների հետազոտությունների կենտրոնում առաջնայինը ինդուստրացման խնդիրներն էին, և այս առումով գլխավորապես ուշադրության էին արժանանում ավտոնոմ ինվեստիցիաները՝ պայմանավորված պետության՝ ազգային եկամուտի աճին ուղղված տնտեսական քաղաքականությամբ: Մինչդեռ քեյնսականությունը նման հարցերի լուծումները չուներ, քանի որ Քեյնսի մոդելը հիմնականում դիտարկում էր դեպրեսիոն տնտեսությունը՝ այն էլ կարճաժամկետում: Քեյնսյան մոդելում, եթե հավասարակշռված ՀՆԱ-ի մակարդակին համապատասխանում է ոչ լրիվ զբաղվածություն, ապա տնտեսական աճ և լրիվ զբաղվածություն ապահովելու նպատակով հարկ է խթանել ինվեստիցիաները: Այստեղ ինվեստիցիաները դիտարկվում են բացառապես տնտեսական աճի տեսանկյունից, ընդ որում՝ դրանք ազդում են ոչ միայն տնտեսական աճի, այլ նաև կապիտալ պաշարների մեծության վրա: Նկատենք, որ քեյնսյան մոդելում վերջինս ընդունվում է հաստատուն, ազգային եկամուտի հավասարակշռված մակարդակի ձևավորումը՝ կարճաժամկետում, մինչդեռ **Հարոդի** և **Դոմարի** մոդելներում տնտեսական աճի կարգավորման հիմնական փոփոխական ընդունվում են ինվեստիցիաները, և ուսումնասիրվում են այն պայմանները, որոնք ապահովում են ազգային եկամուտի հավասարակշռված մակարդակ երկարաժամկետում:

Հարոդի մոդելում կարևորվում է ինվեստիցիաների մակարդակի վրա ազգային եկամուտի աճի ազդեցությունը, ընդ որում, ընդունվում է, որ առկա է խնայողությունների և ինվեստիցիաների հավասարակշռություն: Այլ խոսքով, մոդելի հիմքում ընկած է աքսելերատորի էֆեկտը, համաձայն որի ինվեստիցիաների, հետևաբար՝ կապիտալի մակարդակը պայմանավորված է եկամուտի աճով, իսկ տնտեսական աճը ուղիղ համեմատական է խնայողության նորմին, հակադարձ համեմատական՝ աքսելերատորի նորմին կամ սահմանային կապիտալատարությանը: Այսինքն՝ խնայողության նորմի մեծամանը զուգընթաց մեծանում է նաև տնտեսական աճի տեմպը, իսկ աքսելերատորի աճին զուգընթաց՝ նվազում և հակառակը: Սա բացատրվում է նրանով, որ եթե խնայողության նորմը մեծանում է, ապա պետք է մեծանա նաև տնտեսական աճի տեմպը, որպեսզի ըստ աքսելերատորի սկզբունքի՝ ինվեստիցիաների աճը համապատասխանի պլանավորված խնայողությունների մակարդակին, և հակառակը. որքան փոքր է աքսելերատորը, այնքան փոքր են ինվեստիցիաները, հետևաբար՝ այնքան մեծ պետք է լինի տնտեսական աճի տեմպը, որպեսզի կլանի առկա խնայողությունը [5]: Երբ տնտեսական աճի տեմպը մեծանում է, ինվեստիցիաներն աճում են, որը, ըստ

էության, նշանակում է խնայողության կլանում: Մինչդեռ, եթե տնտեսական աճի մակարդակն այնպիսին է, որի դեպքում խնայողությունները չեն ուղեկցվում համապատասխան ինվեստիցիաներով, ապա դրա անմիջական հետևանքը լինում է չիրացված արդյունքների կամ դրանց պաշարի քանակի ավելացումը, որն էլ հանգեցնում է տնտեսական անկման: Ինչ խոսք, աքսելերատորի նորմը կամ սահմանային կապիտալատարությունը կախված է ինչպես տեխնոլոգիական առաջընթացից, այնպես էլ տնտեսական ցիկլի փուլերից, ընդ որում՝ տնտեսական վերելքների ժամանակ կապիտալի օգտագործման ծանրաբեռնվածությունն աճում է, իսկ վայրէջքների փուլում՝ նվազում:

Դոմարի մոդելի հիմքում խնայողությունների և ինվեստիցիաների մակրոտնտեսական հավասարակշռությունն է, այսինքն հավասարակշռության պահպանման համար ինվեստիցիաները և ազգային եկամուտը ժամանակի ընթացքում պետք է աճեն նույն և կայուն տեմպերով: Ակնհայտ է, որ այսպիսի դինամիկ հավասարակշռությունը հազվադեպ է լինում կայուն, քանի որ մասնավոր հատվածի պլանային ինվեստիցիաների աճի տեմպը կարող է շեղվել մոդելի սահմանած մակարդակից, այսինքն հաշվարկային մակարդակից լինել ավելի բարձր կամ ցածր: Այստեղ կարևորվում էր այն հանգամանքը, որ արտադրական կարողությունների աճով պայմանավորված՝ տնտեսական աճը պետք է համապատասխանի հասարակության կողմից կատարվող ծախսերին, այսինքն ամբողջական պահանջարկի աճին [5]: Դոմարի տնտեսական աճի մոդելի կարևոր պայմանը արտադրական կարողությունների լրիվ զբաղվածությունն է, ընդ որում, արտադրական կարողությունների աճը պետք է համապատասխանի ինվեստիցիաների աճին: Նկատենք, որ Դոմարի մոդելը սկզբնական շրջանում չէր ներկայանում որպես տնտեսական աճի տեսություն: Այն ընդամենը քեյնսյան կարճաժամկետ հավասարակշռության պայմանները առավել երկար ժամանակաշրջանում ընդլայնելու համարձակ փորձ էր: Կասկածից վեր է այն, որ Հարոդի և Դոմարի մոդելները լրացնում են միմյանց, և պատահական չէ, որ դրանք միավորվեցին մեկ միասնական մոդելի մեջ, որն էլ ընկած է «մեծ հրման» տեսության հիմքում: Չնայած այն հանգամանքին, որ մոդելը բավականին անկատար էր, այն ցույց տվեց, որ ինվեստիցիաների աճի և ՀՆԱ-ի աճի տեմպերը կապված են միմյանց հետ, ինչը բազմիցս հաստատվել է բազմաթիվ էկոնոմետրիկ թեստերով: Այս առումով, ճշմարիտ է այն, որ երկրների մոդեռնացումը ենթադրում է կապիտալի հսկայական ներարկում, որի արդյունքում սկսվում է ինքնապահպանվող աճը: Ինչ խոսք, ռեսուրսների նմանօրինակ ինքնակամ մոբիլիզացումը իրատեսական չէ, և այս առումով կարևորվում են պետության գանձարանային և դրամավարկային քաղաքականությունների արդյունքում ձևավորված խնայողությունները: Ինչ վերաբերում է գանձարանային համակարգին, ապա վերջինիս անարդյունավետությունը կարող է փոխհատուցվել կապիտալի ներմուծման հաշվին: Այս-

տեղ հիմնական խնդիրն այն է, որ ներարկումների մեծությունը պետք է բավարար լինի անշրջելի շարժ սկսելու համար, հակառակ դեպքում այն ամբողջությամբ կծախսվի դեմոգրաֆիական աճով պայմանավորված՝ ընթացիկ պահանջմունքների ապահովման նպատակով: Հենց այս մտայնությամբ են «մեծ հրման» տեսության և նեոքեյնսականության կողմնակիցները քննադատաբար վերաբերվում շուկայի կարգավորիչ գործառույթին: Սա է պատճառը, որ վերջիններիս բնորոշ է մակրոմոտեցումը, այսինքն տնտեսության՝ որպես միասնական ամբողջության վերլուծությունը, ազգային տնտեսության աճի օպտիմալ տեմպերի սահմանումը: Ուստի ազգային տնտեսության աճի տեմպերի արագացման նպատակով իրականացվում է ինվեստիցիաների բաշխում՝ ըստ տնտեսության ճյուղերի: Այս մոտեցման կողմնակիցների մեծ մասը շուկան ամենից առաջ դիտարկում է որպես ստատիկ, այլ ոչ թե դինամիկ համակարգ, որը ինքնուրույն ի վիճակի չէ իրականացնելու մոդեռնացում և զարգացող երկրների տնտեսությունը դուրս բերելու «աղքատության արատավոր շրջանակից»: Նկատենք, որ «մեծ հրման» գաղափարը ծագել է «Մարշալի պլանի» ազդեցությամբ, որը մեծ դեր խաղաց հետպատերազմյան Եվրոպայի վերածննդի հարցում: «Մեծ հրման» տեսությունը պաշտպանում էին և՛ զարգացող երկրների ղեկավարները (նրանք այդ երկրների տնտեսական և սոցիալական հետամնացության հիմնական պատճառը դիտում էին կապիտալի պակասը), և՛ այդ երկրների բնակչության լայն շերտերը (ստեղծում էր «բարեկեցիկ հասարակության» բարձունքների արագ ձեռքբերման և վճռական մոդեռնացման հնարավորության պատրանք): Քանի որ մոդեռնացման ծրագրի իրականացումը վստահվել էր պետական պաշտոնյաներին, ժամանակի ընթացքում այս երկրներում ստեղծվեց հատուկ սոցիալական շերտ՝ պետական բյուրոկրատական բուրժուազիան, որը շահագրգռված էր ծրագրի իրականացման գործում: Ի վերջո, չի կարելի հաշվի չառնել զարգացած երկրների խոշոր կորպորացիաների նպատակներն ու շահերը, որոնք փնտրում են կապիտալի ներդրման առավել շահավետ ոլորտներ: Այս ամենը նոր տեսության նկատմամբ առաջ բերեց ոչ միայն տեսական հետաքրքրություն, այլ նաև վերջինիս գործնական կիրառում Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում: Զարգացող երկրներում վերոնշյալ մոդեռնացման այս հայեցակարգերում հիմնականում կարևորվում է այնպիսի սահմանափակ գործոնի օգտագործումը, ինչպիսին կապիտալն է, և ակնհայտորեն հաշվի չի առնվում համեմատաբար ավելցուկային գործոնի՝ աշխատուժի օգտագործման հնարավորությունը, ինչն էլ հիմք հանդիսացավ նեոդասականների կողմից նեոքեյնսական ուղղության արդարացված քննադատության համար:

Նման մոտեցմամբ զարգացումը ենթադրում է տնտեսության հիմնական ճյուղերում խոր կառուցվածքային փոփոխություններ: Ինչպես ինքնապահպանման աճի տեսություններում, այնպես էլ այստեղ առաջնային պլան են մղվում

տեխնիկատնտեսական հիմնախնդիրները, այսինքն տնտեսության ժամանակակից ճյուղերի բացակայությունը համարվում է զարգացման գլխավոր արգելապատնեշ, ուստի ներկա պայմաններում անհրաժեշտություն է ազգային տնտեսության ժամանակակից ճյուղերի ստեղծումը: Վերջինս, բնականաբար, ենթադրում է տեխնոլոգիայի դերի մեծացում, այսինքն առանց առաջադիմող տեխնոլոգիաների կիրառման՝ պարզապես բացառվում է որակյալ տնտեսական աճի հնարավորությունը: Սա նշանակում է, որ ներկա պայմաններում տնտեսական աճը ոչ մի կերպ չի կարող շրջանցել տեխնոլոգիական մոդեռնացումը. հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացումները տնտեսական աճի ապահովման թե՛ քանակական, թե՛ որակական բարելավման հիմնական աղբյուր են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Rostow W.** The Stage of Economic Growth. A Non-communict Manifesto- Cambridge, 196O. См. также: Rostow W. The Process of Economic Growth. 2 ed.- Oxford, 1960. - P. 307-331.
2. **Rostow W.** The Take-off into Self-sustained Growth//The Economics of Underdevelopment. - 2 ed.- L., 1960. - P. 154-186.
3. **Rostow W.W.** Politics and the Stages of Growth. - Cambridge, 1971.- 230 p.
4. **Kuznets S.** Notes on Take-off//The Economics of Take-off into Sustained Growth. - L., 1963.- P.34, 41, 451.
5. **Хэмберг Д.** Ранняя теория роста: модели Домара и Харрода / Ред.: В.С. Афанасьева и Р.М. Энтова. Современная экономическая мысль. - М.: Прогресс, 1981.- 490 с.

М.К. АГАЯН

КЕЙНСИАНСКИЕ МОДЕЛИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

Анализ кейнсианских моделей экономического роста показывает, что экономическое развитие предполагает глубокие структурные изменения в ключевых секторах экономики. Без использования передовых технологий возможность качественного экономического роста просто исключена. Это означает, что в нынешних условиях экономический рост не может обойтись без технологической модернизации. Следовательно, научные и технические достижения являются основным источником количественного и качественного улучшения экономического роста.

Ключевые слова: экономический рост, экономическое развитие, институциональные изменения, развивающиеся страны, технологическая модернизация, порочный круг бедности, производственнные инвестиции, средний уровень национального дохода на душу населения, теория “большого толчка”.

M.K. AGHAYAN

KEYNSIAN MODELS OF ECONOMIC GROWTH

The analysis of Keynesian models of economic growth shows that economic development implies profound structural changes in key sectors of the economy. Without the use of advanced technologies, the possibility of quality economic growth is simply ruled out. This means that in current conditions, economic growth can not take place without technological modernization. Consequently, scientific and technological developments are the main source of quantitative and qualitative improvement of economic growth.

Keywords: economic growth, economic development, institutional change, developing countries, technological modernization, the vicious circle of poverty, productive investment, average national income per capita, “big push” theory.

ՀՏԴ 329 (479.25)

Ա.Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԱՐՄԵՆԱԿԱՆ, ՀՆՉԱԿՅԱՆ ԵՎ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Անդրադարձ է կատարվել 19-րդ դարի վերջին Արևմտյան Հայաստանում ստեղծված տագնապալի իրավիճակին: Հայկական ազգային քաղաքական կուսակցությունները ձգտում էին ժողովրդին պատրաստել ինքնապաշտպանության: Վան-Վասպուրականում գործող Արմենական, Հնչակյան, Դաշնակցական կուսակցությունները արտասահմանից զենք-զինամթերք էին տեղափոխում և զինում հայդուկներին: Վանի հերոսական ինքնապաշտպանությունը տեղի ունեցավ 1896 թ. հունիսին: Վերոնշյալ քաղաքական կուսակցությունների առաջնորդներ Մկրտիչ Ավետիսյանը (Արմենական), Մարտիկը/Մարտիրոս Սարուխանյանը (Հնչակյան) և Պետոն/Ալեքսանդր Պետրոսյանը (Դաշնակցություն) հանդես եկան միասնականորեն՝ քաջաբար առաջնորդելով ազգային ընդվզումը:

Առանցքային բառեր. Վան-Վասպուրական, ազգային կուսակցություններ, զենքի և զինամթերքի փոխադրում, ինքնապաշտպանական մարտեր, միասնական դիրքորոշում:

19-րդ դարի 90-ական թվականներին Էրգրումում գործող քաղաքական ուժերի գործունեությանը բնորոշ երևույթ էր զինակիր խմբերի կազմակերպումը և դրսից զենքի ու զինամթերքի պաշարների փոխադրությունը: Երկրի ներսում զենք դժվարությամբ էր ճարվում, քանի որ «... հոն ներքի շուկայ չէր ստեղծուած եւ յոյս ալ չկայ, որ ստեղծուի» [1]:

Իսկ առանց զենքի անկարելի էին հայոց կուսակցությունների գոյությունն իսկ և ազգապաշտպան ծրագրերի իրականացումը: Այդ էր պատճառը, որ և՛ արմենականները, և՛ հնչյանները, և՛ դաշնակցականները հետամուտ եղան զենքի փոխադրության գործը կազմակերպելուն: